

Գոհունակ սրտով կը տեղեկացնեմ թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ Ձեր նիւթակալութեան
ու բարոյական օժանդակութեան շնորհիւ բոլորած ենք յաջող տարի մը:

Մեր մէկ տարուան գործունէութեան ամփոփ պատկերը հետեւեալն է:

Եկեղեցական պաշտամունքները կեդրոնը կազմելով մեր կրօնական կեանքին ամէն,
հիրակի եւ տօնական օրերուն ունեցած ենք եկեղեցական պաշտամունք եւ
խօսած աւուր պատշաճի քարոզ Հայերէն ու Անգլերէն լեզուով առ ի շինութիւն
մեր հաւատացեալ ժողովուրդին: Մեծ Պահքի մէջ իւրաքանչիւր Զորեքշաբթի իրիկուն
ժամը 7ին կատարած ենք Հսկումի արարողութիւն:

Առաջնորդ Սրբազան Հօր արտօնութեամբ Մարտ 12-մինչեւ Մայիս 28,
Ս Պատարագին վերջաւորութեան ունեցանք Անգլերէն լեզուով կարճ ժամերգութիւն
նոր սերունդը եկեղեցիին կապելու բարի մտադրութեամբ:

Ծնունդին եւ Ձատկին կատարած ենք Տնօրհնէք: Մեռելոցին, Մէմօրերը Տէյի
օրհնած ենք Հայ նշնջեցեալներուն գերեզմանները: Այցելած ենք հիւանդներուն ու
սգաւորներուն: Նախագահած ենք Ծխական Խորհուրդի եւ եկեղեցական կազմակեր-
պութիւններու ժողովներուն: 1972 տարուան ընթացքին կատարած ենք հետեւեալ
խորհրդակատարութիւնները: Մկրտութիւն 1, Պսակ 5, Թաղում 5:

Հարտածրտի Ս Գէորգ Եկեղեցւոյ հովիւին հիւանդութեան պատճառաւ, Փետրուար
2ին թաղման կարգը կատարած եմ հանգուցեալ Գէորգ նորսիկեանին: Փետրուար 9ին,
ինծի հետ ունենալով Տիկին Մանուշակ Կալազանը, Պր. Մանուկ Պաղտիկեանը եւ
Երէցկին Մարի Տէր Ասատուրեանը ներկայ եղանք Նիւ Պրիթընի Գանձընս ավ Զըրչի
տարեկան ճաշկերոյթին: Մարտ 10 ին Ծխական Խորհուրդի անդամներուն հետ ներկայ
եղանք Երջանակներու ժողովին որ գումարուեցաւ Սբրինկաիլտի Ս Յովհաննէս
Մկրտիչ եկեղեցիին մէջ:

Առաջնորդարանի կարգադրութեամբ, Յուլիս 14-16 նիւ-նորթի
մէջ մասնակսեցայ հոգեբանական յայտադրի մը նիստերուն, որոնք եղան շատ օգտակար:

Նոյեմբեր 11 ին Երէցկինին հետ ներկայ եղանք Հարտածրտի Ս Գէորգ եկեղեցւոյ
տարեդարձի հանդէսին եւ խօսեցանք ծուխիս անոնով: Վերոյիշեալներէն զատ կատա-
րած ենք գրասենեակի յատուկ աշխատանք:

Եզրափակելով խօսքս, կը խնդրեմ Աստուծամէ որ օրհնէ համայնքիս ազնիւ ժո-
ղովուրդը եւ պարգեւէ երկնային իմաստութիւն եւ բարի առաջնորդութիւն որ
կարենանք ծառայել իր փառքին ու մեր ժողովուրդին: *Joseph P. S. Chouratone*